22. ԴԸՆՑԱ ԳՈՒԶԱԼ

Կէղնի, չէղնի թագաւոր մը։ Անուն Տրգատ թագաւոր։ Կէղնի ուրին տղէ մը։ Տղեն պզտիկ կէղնի, կդրա սենյակ մը, կկարդցու։ Մեկ վարժապետիմ՝ ալ ամսական կիտա, մինակ ուր տղին դաս կիտա։ Ուր տղի կերակուլ ու ամենան բան վարժապետ կբերա աղին։ Ու տղեն դուս չէլնի, լուս ու արև չտեսնա։ Ժամանակ մը կընցնի, վարժապետ կբերա տղին միս ու զուր կերակուլ, կդրա տղի հ՝առեջ ու կէրթա։ Տղեն լէ կուտա զմիս ու կվերու օսկոռ մը, կթալա։ Ատ օսկոռ կէրթա կառնի փանշարի շուշեն ու շուշեն կծակի, շող կզարկա շուշի միշեն՝ հ՝օդեն։

Տղեն զրգ շող կտեսնա, շատ կվախենա, կհարցու, կըսա՝ «Դու ի՞նչ մարդ իսչ։ Ու ինչ չարա կէնա, տղի պատասխան չի տա։ Տղեն ու շող կէլնին խաչկին հ՝իրար։ Տղեն կտանի դեն, կբերա դեն օգուտ մը չկտրա։ Տղի հանք ու բեհն կկտրի ու տղեն կպատի ու կնեղենա, քնի։ Դասի գախ օր կէղնի, ուր վարժապետ կիգա զտղեն կիմցու։ Տղեն օր քնուց կէլնի, քրտինք տվե վրր տղին։

Վարժապետին կըսա.—Աստված զքու տուն ավրա, իմա՞լ դու կթողիս էրթաս, ես կմնամ մինակ ու իդա մարդ էկի մըշ իմ հ՝օդեն, ինչ կենիմ, զիմ շուհար չի տա, ու կէնիմ չէնիմ, դուս չըմ կէռնա հանի։ Ինչ էնի չարա չէղավ ու շատ նեղեցա՝ պառկա, քնա։

Վարժապետ տղին կէսա.—Քու տուն ավրի, էդի մարդ չի, ըդի շող ա, բպա դու ղրդի չը՞ս տեսի, օր դու էլնիս դուս, տեսնաս արև ու լուսնակ կա, գիշեր ու ցերեկ կա, ախշար հանդին մեջ կօլորդին։

Տղեն կէսա.—Ուխտ էղնի, պտի ես լուսուն էլնիմ դուս։ Դու էրթաս թագավորին ըսիս. «Լուսուն քու տղեն կէլնի դուս»։ Ու թըղ դուր պատրաստութեն տեսնա։

Լուսուն թագավոր ինչխդար մախուլ մարդ մը կեր, խանչեց, բերեց, զըմեն տղի սենյակի դուռ սրով նստեցուց։ Էրկու ձեռ դհոլ ու զուռնա բերեց ու զտղեն հանեց գուս, կերուխում էնեցին, յոթն օր դհոլ ու զուռնա զարկեց, ուրախութեն էնեցին։

Տղեն ըսեց.—Ուխտ էղնի, քանի օր հըմլա լուս ու արև կար ու գու զիս դուս չըր հանե, ես պտի էն սենյակ չմտնիմ էլ։

Ու չմտավ լէ։

Տղեն հեծավ զգահել ձին ու ախշար օլորտավ ու զախշար կուշտ մը տեսավ։ Էկավ ըսեց.—Օխեշ, ես ախշար կուշտ տեսա ու քասար էլավ իմ սրտեն։

Թագավոր մտադրեց, ըսեց՝ զիմ տղեն պտի կարգիմ։

Տղեն ըսեց.—Պտի ես ախշար շուռ իգալով ընձի լավ, գեղեցիկ կնիկ մը գտնամ. ու քու հիվով չըմ թոզի։

Թագավոր ըսեց.—Կամք՝ քումն ա։

Տղեն լուսուն էլավ, հեծավ զուր ձին, ընկավ ախշար, շուռ էկավ։

Գնաց էրկիր մը, շինութենի մը ռաստ էկավ։ Ըդ շինութենի դուռ հ՚իջավ։ Ըն գախ օր մտավ ներս, տեսավ օր իրեք հատ աղջիկ ընդեն ըդ շինութեն։ Շատ խորոտ են։ Արևու պես փեյք կիտեն։ Իրեք լա քուր են։ Ջոջ քրոջ ըսեց.—Դու չը՞ս առնի զիս։

Ջոջ քուր ըսեց.—Կառնի՛մ։

Ըսեց.—Ի՞նչ փեշակ դինաս։

Ըսեց.—Խալի, կարպետ մը կգործիմ։

Ու առավ զջոջ աղջիկ, էկավ։

Էկավ, նոր ջոջ աղջիկ պսակեց ու զուր հարսնիքն օր էնեց, աչքեց տեսավ ձեռնեն բան մը չի գա։

Ըսեց.—Աղջի՛, հո՞ւր ա քու ասած խոսքդ։

Աղջիկ ըսեց.—Օր ըդմալ չասենք, դու զիս չըր առնե։

Զախչիկ տփեց էնեց դուս ու ծոտոտ քոխ մը կեր իրենց հավու քոխ, տարավ մտուց հ՚ոնի։

Տղեն հեծավ զուր ձին, քշեց գնաց մեկէլ էրկու քրոջ։ Միջնեկ քրոջ ըսեց.—Դու դիս չը՞ս առնի։

Ըսեց.—Կառնի՛մ։

Ըսեց.—Փեշակ դինա՞ս։

Ըսեց.—Ըն հըմալ լա՜վ կերակուր կէփիմ ու լա՜վ սեղան մը կպատրաստիմ, օր քու պապու ասքար ինչխաղար կա, քոմի վրեն, ուտա ու չթըմի։

Առավ զմիջնեկ քուր ու էկավ, զուր հարսնիք էնեց։ Էնգախ օր պսակեց ու միջնեկ քրոջ ըսեց.—Հ՚ո՞ւր ա քու ըսաց խոսք։

Միջնեկ քուր տղին ըսեց.—Օր ըդհըմալ չըսենք, դու դիս չըր բերե։

Ու բռնեց ծամեր տփեց, զէգ լէ տարավ մտուց ըն ծուտոտ քոխ՝ ջոջ քուրոջ մոտ։

Էլավ զուր ձին հեծավ, էկավ պզտիկ քուրոջ։ Պզտիկ քուրոջ ըսեց.—Դու դիս չըս ա՞ռնի։

Ըսեց.—Ես քըզի կառնիմ։

Ըսեց.—Փեշակ դինա՞ս։

Ըսեց.—Չէ՛, ես փեշակ չըմ գինա, օր դիս տարար, օր իմ ինն ամիս թըմմավ, ընձի կէղնի տղա ու աղջիկ մը։ Տղի ծամեր օսկի, աղջկա ակռեք՝ սադաֆ։

Ու թագավորի տղեն առավ ղրդի էկավ։ Բերեց զուր հարսնիք էնեց ու պսակվավ։ Ինն ամիս օր թըմմավ ու կնիկ պարկավ, բերեց տղամ՝ ու աղջիկ մը։ Տղի ծամեր օսկի, աղջկա ակռեք՝ սադաֆ։

Էնգախ օր էդրա քուրվըտիք հասկցան ըն ծուտոտ քոխի մեջ, ջուհաբ էնին տատմոր, էկավ, ըսեցին.—Դե՛, էրկու ճանկ օսկի քըզի, դու զըն տղա-աղջիկ կորցուս, ու ճամբախ մը հանիս։ Հ՚որի օր մըր պզտիկ քուրն էր ու զուր խոսք տարավ առեջ ու զմըր իրիկ առավ։

Տատմեր էլավ էկավ, տեսավ օր թագավորին դել մը թլխեր էր ու էրկու թուլա վերուց, տարավ ջոկ-ջոկ պլուլեց ու տարավ կնկա կշտին դրեց։ Էրկու կտոր ջաքար գնաց բերեց, զրդ տղեն ու աղջիկ վերուց սանդուխ դրեց ու ամեկու բերնին կտոր մը ջաքար դրեց, սանդուխի բերան փակեց։ Վերուց, տարավ ծով թալեց ու դարձավ էկավ։

Թագավորի տղեն ուրնէ հարցուց, ըսեց.—Մարե՛, քու հարս պառկեր է, ի՞նչ է բերե։

Ըսեց.—Լաո՛, իմ հարս պառկե, ջուխտ մը շան թուլա ի բերե։

Տղեն ըսեց.—Օր հմալ ա, իմալ օր մեկէլ էրկու քուրոջ խոսքն էր, ըդրտն լա իմալ էլավ։

Ու տղեն էլավ տան տակ, շուկի գլուխ հոլըք մը սուքեց ու բռնեց զրդ կնկա ձեռ, տարավ ըդ հոլըք դրեց ու տարավ սև մրոտ պղինձ մը, էդրա մոտ դրեց, ըսեց.—Հ'ընցնող-դարձող պտի զուր մատ ղարկա ըդ պղնձի կուշտ ու էդրա էրես մրա։ Ու օրեն մեկ՝ գարու ցամաք հաց էդրան տվըցվի, էվել ոչ բան մը պտի չտվըցվի։ Ու ընմալ լա էնեց։ Ըդի հ'ոդի թըղ մնա։

Դառնանք վըր տղին ու աղջկան։ Տղեն ու աղջիկ ինկան ծովու ափ ու հա՛ զուր զէտոնք տարավ, շատ ու քիչ տարավ ջաղցի մը կանգարի հասուց ու տարավ պատուց վաք ու ջաղաց կանավ։ Ջաղցպան դուրս էլավ ու տեսավ սանդուխ մը, վերուց սանդուխ, առավ էկավ, շատ ուրախցավ։ Սանդուխ դրեց դե մա ու զուր աղուն աղցավ։ Իրիկուն օր էղավ, վերուց զուր սանդուխ զուր ջաղցի դուռ փակեց ու տուն էկավ։ Ինչ օր էղեր էր ուր կնկան պատմեց, ինք ուր կնիկ շատ ուրախցան. էլ ինչ էնին, սանդուխի դուռ չկերցան բացին ու կանչին աստծուն, ասին՝ «Թըզ հրաման էղնի, օր էդա սանդխի դուռ ետ դառնա»։ Ու սանդխի դուռ բացվավ։ Աչքիցին, տեսան սանդուխի մեշ տղա ու աղջիկմ՝ էր ու տղի ծամեր օսկի էր, աղջկա ակռեք՝ սադաֆ էր։ Տղեն ու աղջիկ պահեցին։ Ջաղցպան, ուր կնիկ ծերացած ին ու հեչ զավակ չունեցած ին ու կնիկ զէդ էրկու էրեխեն պահեց։ Էդ էրկու էրեխեն չափահաս էղան։ Տղեն հ'ըմեն օր կէրթեր ջաղցպնի մոտ ու կուզեր շաղցպնութեն սովրեր ու ջաղցպնութեն սովրավ։ Ջաղցպան հիվնդցավ, ուր ժամանակ լմնցավ, ըդհաղ պտի մեռներ, տղին թամբիհ ընեց։

Ըսեց.—Գրուրիկմ՝ օսկի հանդ է ջաղցի տըկու քարի տակ։ Դու դէն օսկին հանիս, բերիս, ուտիս՝ հ'որի օր դու իմ զավակն իս։

Ու ջաղցպան մեռավ։ Տղեն զուր ջաղցպնութեն էրեց, շատ ժամանակ մնաց, տղի մամ լա ծերացավ, ուր ժամանակ լմնցավ ու մեռավ։ Տղի անուն Սուրմա Սաչ էր ու աղջկան անուն՝ Ինկի Դուշի։ Տղեն էկավ, շոշ—ահագին զաղ մը քաշեց ուր տան բոլոր ու ասեց. «Ես պտի լավ, խորոտիկ քոշկ մը սուքիմ»։

Գնաց ուսթեսներու ետև։ Զորս հատ ուսթա բերեց, օր զուր քոշկ սուքին ու ինք թողեց գնաց ուր ջաղաց։ Իրկուն օր էղավ, աչքեց տեսավ՝ նա՛ սուքել, նա՛ բան։

Ըսեց.—Ինկի Դուշի, էդա ուսթեք հ'ո՞րի չսուքին զմեր քոշկ։

Ըսեց.—Չորս հատ մարդ էկան ու զմեր ուսթեք տարան, չթողին սուքեն զմեր քոշկ։

Լուսուն տղեն էլավ հեծավ զուր ձին, գնաց թագավորի սարեն։

Թագավոր ըսեց.—Հ՚ո՞րի ես էկի։

Տղեն ըսեց.—Երեք-չորս հատ ուսթա տարեր ենք, օր ղիմ քոշկ սուքեն ու էկած տարած։ Ես չիմ դինա ո՞րն ա տարե։

Ու թագավորի սիրտ ցավաց վեր էդ տղին, ուր արուն կեռա։

Հ՚որի օր ուր պապն ա ու չճանչնա։

Թագավոր կըսե.—Դու շատ լավ խորոտիկ տղեմ՚ իս։ Ես պտի քզի իտամ ութ հատ ուսթա իմ քյըսուց։ Քզի յոթ խատ էլ քոշկմ՚ ա սուքին։

Ու տղեն էլավ, առավ զուր ուսթեք զութ խատ ուսթեն լա ու գնաց։ Տարավ զուր շինութեն։ Ուսթեաներուն ցուցուց, ուսթեք սկսին սուքել։ Տղեն թողեց գնաց ուր շաղչին էտևանց, քանիմ՚ օր սուքեցին, տղեն մի ութ խատ էլ քոշկմ՚ ալ լմնցուցին։ Տղեն էկավ ու զէդ ութ ուսթեն լէ ճակեց ու զուսթեք դուրս հանեց։ Ուսթեք գացին ուրանց տուն ու տեղ։ Զուր քուր դրեց մըշ ուր քոշկին ու էլավ գնաց ուր շաղչին էտևան։ Իրիկուն էկավ, ինք ու ուր քուր շատ ուրախցան վըր ուրանց քոշկին։ Լուսուն էլավ, օր կիրակի, էդ հեծավ զուր ձին, գնաց թագավորի տուն։ Օր մորքրդիք տեսան, ուրանց աչքեր քոռցավ։

Կանչեցին տատմոր, ըսեցին.—Մենք քզի էրկու ճանկ օսկի տվինք, օր դու զէդոնք կորցցեր ու էդիկ կիգա մեր աչից առչևով՚ կընցնա ու կդառնա։ Զէդ էրկու ճանկ օսկին լա քզի կիտանք ու դու զէդ տղեն կորցուա։

Ու պառավ ըսեց.—Թը՛ղ էղնի։

Տղեն լուսուն էլավ գնաց ուր շաղաց։ Պառավ լէ էլավ գնաց տղի քոշկ ու սարեն։

Ըսեց.—Ինկի Դուշի՛, զդուռն ինձի բաց ու ես իկամ զքզի տեսնամ։

Ինկի Դուշին էլավ ու զդուռ բացեց։

Պառավ էկավ ներս։ Քիչ մա ղինկի Դուշու գլուխ շփեց ու ուրախցավ վրեն, ուր սրտին էկեր էր, օր Սուրմա Սաչ ճամբցեր հեռու էրկիր, անդառնալի ճամբախ ու կորցցեր, բայց չէր հայտնի։

Ըսեց.—Ինկի Դուշի, ձեր քոշկ շա՞տ լավն ա, բո՞ւմբարաք էղնի, բայց մեկ բան պակաս ա, էդ քոշկին պիտի Հազարենց բըլ-

քով օր բերիք դրիք փանջարեն, օր ընի ուրին կարդա, դու լա անկաշ էնիս։

Ու իրիկուն Սուրմա Սաչ ջաղջեն էկավ, ըսեց.—Ինկի Դուշի, զդուռ բաց։

Ինկի Դուշին ըսեց.—Զդուռ չը՛մ բանա։

Ըսեց.—Հ՚ո՞րի չըս բանա։

Ըսեց.—Դու զիս կթողիս հ՚ոդա մինակ ու դու կէրթաս ճաղաց։ Դորճեսներուն հետ մրժլիս, ու ես մինակ հ՚ոդա կնստիմ, հ՚ո՞րի չըս էրթա Հազարենց բլբուլ մզի բերիս ու դրինք էդա փանջարեն օր ուրին կարդա, ու իմ քեֆ բացվի։

Տղեն ըսեց.—Դուռ բա՛ց, օր ես իդամ քիչ հանգստիմ ու քիչ հաց ուտիմ, քիչ դընչանամ, աստված օգորմած ա։

Ինկի Դուշին զդուռ բացեց ու Սուրմա Սաչ էկավ ներս։ Հաց կերավ, քիչ հանդստավ ու պառկավ, քնավ։

Լուսուն էլավ զուր ձին հեծավ, ըսեց.—Ցալա՜ ու յա՜ աստված, դու աջողութեն տաս,—ու քշեց գնաց։

Շատ ու քիչ գնաց, յոթ ճամբու կցվան ռաստ էկավ։

Հալվորմ՚ հ՚ոդի տեսավ։ Բարև տվեց, բարև առավ։

Հալվոր ըսեց.—Ո՞ւր կէրթաս։

Ըսեց.—Կէրթամ զՀազարենց բլբուլ բերիմ։

Հալվոր ըսեց.—Սովրցողի աչք քոռնա, որ օր գացե՝ ետ չդարձե. քար ա դարձե,—ըսեց.—Դու կէրթաս իմա՞լ կրերիս։

Տղեն ըսեց.—Ես կէրթամ հրմա կվերում ու կիգամ։

Հալվոր ըսեց.—Երբ օր դու կէրթաս, յոթն ավուր ճամբախ կէրթաս, քոշկ ու սարիմ՚ ռաստ կիգաս։ Քոշկի դուռ կբանաս ու մեջ կմտնիս, ներքին խատ հրեղեն ձի ին, վերին խատ՝ փանջարի առեջ, Հազարենց բլբուլ գրուկ ա։ Երբ օր դու մտար ներս, ձիանք կհռհռան, դու զուրանց գամ ուրանց բերնեն կհանիս, օր դու զուրանց գամ ուրանց բերնեն չհանիս, կէղնիս քար, երբ օր դու զուրանց գամ ուրանց բերնեն հանիր, ուրանք խոտ կուտին, դու կէլնիս վերին խատ, զՀազարենց բլբուլ կվերուս ու ետ կդառնաս։ Քու ետև չաչքիս, քար ու փետ կրոռա, կեսա. «Հողեղեն տարավ զհրեղեն»։ Դու չվախենաս, հանդե կառնիս կիգաս։

Տղեն զուր ձին քշեց յոթն ավուր ճամբախ գնաց ու ըդ քոշկին ռաստ էկավ։ Զքոշկի դուռ բացեց ու ներս մտավ, տեսավ օր ներքին խատ ձի ին։ Ձիանք հրռհրռացին։ Ձիաներու գամ ձիաններու բերնեն հանեց ու ձիանք ուրանց խետ կերան, ինք էլավ վերին

խատ զՀազարենց բլբուլ վերուց ու ետ դարձավ։ Քար ու փետ բոռաց, ըսեց. «Հողեղեն տարավ զհրեղեն»։ Ու տղեն ուր էտև չաշքեց, առավ զՀազարենց բլբուլ ու էկավ։ Յոթն օր ճամբախ էկավ։ Էկավ ուր հալվորուն ռաստ էկավ։ Բարև տվեց, բարև առավ։

Հալվոր ըսավ.—Բերեցի՞ր։

Տղեն ըսեց.—Հա՛, բերեցի, շատ շնորհակալ եմ քու բարիքեն։

Տղեն զուր ձին քշեց, հալվորին ըսեց.—Մնա՛ս բարով։

Քշեց տղեն դեպի ուր տուն, էկավ։ Բոռաց ըսեց.—Ինկի Դուշի, զդուռ բաց, քու մարամ օր կուղեր, կատարեցի։

Ինկի Դուշին էլավ ու զդուռ բացեց։ Տղեն բերեց զՀազարենց բլբուլ, փանշարեն դրեց, ու Հազարենց բլբուլ ըսեց ու անուշմ՚ ա կարդաց։

Տղեն ուրին հաց կերավ, քիչ դընշացավ, էլավ պառկավ, քնավ։

Լուսուն էլավ, զուր ձին հեծավ, քշեց գնաց մորքըրդոց դռներով հ՚ընցավ, գնաց թագավորի սարեն։ Թագավոր շատ զտղեն սիրեր ու հաղ կէներ։

Տղին ըսեց.—Դու բարով էկար։ Դու ո՞ւր էր գացի ու չէր երևի։

Տղեն ըսեց.—Ես գացի զՀազարենց բլբուլ բերեցի։

Իրկուն օր էղավ, տղեն հեծավ զուր ձին, էկավ մորքըրդոց դռներով հ՚ընցավ գնաց։ Մորքըրդոց աչքեր պտի քոռներ։ Տղեն գնաց ուր տուն, պառկավ, քնավ։ Լուսուն էլավ գնաց ուր շաղշին էրվան։ Տղի մորքըրդիք կանչեցին զպառավ, ըսեցին.—Միք իդհաղ պտի զքու ծամ կտրինք, էդա չորս ճանկ օսկի քզի կիտանք, օր դու զէդ տղեն կորցուս։ Տղեն վաղ օր զուր գլխու գալած թագավորին պատմեց, թագավոր զմզի կսպանա։

Պառավ ըսեց.—Տղեն ք... իմ պապու բերան. լուսուն իս պիտի էրթամ, զտղեն էմալ ճամբըխու մա հետ ճամբցում, օր չդառնա։

Պառավ լուսուն էլավ, դեպի տզի տուն գնաց։

Ըսեց.—Ինկի Դուշի, զդուռ բաց։

Ինկի Դուշին էլավ զդուռ բացեց։ Ըսեց.—Մարե՛, դու բարով էկար,—հ՚ո՞րի օր չըր գինի ի՞նչ դավի էր։

Պառավ ըսեց.—Տեսա՞ր, լաո, բումբարաք էղնի ձեր Հազարենց բլբուլ, ինչ անուշ կէսա ու կկարդա։ Օր ես չէսերինք, դու չէր ֆահմե,—պառավ ըսեց,—շատ խորոտ ա։

Ըսեց.—Ըդրան բան օր մացիր պակաս անմահութեն խնձոր, էրկու հատ էրթա բերա, մեկ դրրա էն փանշարեն, մեկ լա՝ էն մե-

կել փանշարեն, ուր ձեր Հազարենց բլբուլ կարդաց, խնձորներ խոտ իգա,—ու պառավ էլավ ու գնաց։

Իրիկուն տղեն էկավ, ըսեց.—Ինկի Դուշի զդուռ բաց։

Ինկի Դուշին ըսեց.—Ջըմ բացի, դու բերեր իս զՀազարենց բլբուլ կգիժըդցուս զիս։ Դու կէրթաս ճաղաց, քզի դորհեսներու հետ կմժլիս։

Ապա ես մենակ կմնամ հ'ոդա, իմ բեն չէլնի, հ'ո՞րի չըս էրթա էրկու հատ անմահութենի խնձոր բերիս, օր անմեկ խատ դրին մեկ փանջարեն օր հոտ իգա վոես։

Սուրմա Սաչ ըսեց.—Դուռ բաց, ես իգամ հաց ուտիմ, քիչ հանգստիմ, աստված օղորմած ա։

Ինկի Դուշին զդուռ բացեց ու տղեն էկավ ներս, հաց կերավ, քիչ հանդստավ, պառկավ քնավ։ Լուսուն տղեն էլավ, զուր ձին հեծավ ու քշեց գնաց, շատ ու քիչ գնաց, գնաց յոթ ճամփու կըցվան տեսավ օր ուր հալվոր էն էր։ Բարև տվեց, բարև առավ։

Հալվոր ըսեց.—Ո՞ւր կէրթաս։

Ըսեց.—Կէրթամ անմահութենի խնձոր բերիմ։

Հալվոր ըսեց.—Յոթն օր կէրթաս, բաղիմ՝ ռաստ կիգաս։ Անմահութենի ծառ հանդ է բաղի օրթալուզ. էրկու հատ խնձոր փըրցուս ու ետ կդառնաս, քար կբոռա, փետ կբոռա, կըսե. «Հողեղեն տարավ զհրեղեն»։ Քու էտև չըս աչքի, որ քու էտև աչքիս, դառնաս քար։

Տղեն քշեց, գնաց։ Յոթն ավուր ճամբախ գնաց, բաղի մը ռաստ էկավ։ Տեսավ, օր անմահութենի ծառ բաղի օրթալուղն էր, էրկու հատ խնձոր գնաց փրցուց ու հետ դարձավ։ Տեսավ օր քար բոռաց, փետ բոռաց, ըսեց. «Հողեղեն տարավ զհրեղեն»։ Ու տղեն ուր ետ չաչքեց։ Ու տղեն քշեց էկավ։ Շատ ու քիչ էկավ ուր հալվորին ռաստ էկավ։ Բարև տվեց, բարև առավ, հալվոր ըսեց.—Բերի՞ր զխնձոր։

Ըսեց.—Հա՛, բերի զխնձոր, ու հալվորից շնորհակալ էղավ։

Ջուր ձին քշեց դեպի ուր տուն էկավ։

Բոռաց ուր քուրոջ, ըսեց.—Ինկի Դուշի, զդուռ բաց։

Ինկի Դուշին ըսեց.—Օխե՞շ, դրախտի ձեն իմ ականջ պատավ, բարով խերով էկար։

Տղեն զխնձորներն բերեց, ամեկ փանջարեն հատ մը դրեց ու ինք հաց կերավ, քիչ հանգստավ ու պառկավ քնավ։

Լուսուն էլավ, զուր ձին հեծավ ու քշեց մորքրդոց դռներով

10—276

հ'ընցավ։ Ուր մորքրդիք պտի քոռնեն։ Տղեն քշեց, թագավորի սարի դուռ կանավ։

Թագավոր տղից շատ հազ կէներ, թագավոր ըսեց.—Դու բարով էկար, դո՞ր էր գացի, չը երևի։ Ես շատ զքղի կարոտցեր ենք։

Տղեն ըսեց.—Ես գացի անմահութենի խնձոր բերի։

Տղեն իրկուն զուր ձին հեծավ, մորքրդոց դռներով հ'ընցավ ուր մորքրդիք պտի քոռնեն։ Տղեն դեպի ուր տուն քշեց, գնաց։ Իրկուն էլ քիչ հաց կերավ, պառկավ, քնավ։

Լուսուն էլավ դեպի ուր ճաղաց գնաց։

Ուր մորքրդիք զպառավ կանչին, ասին.—Էդ անգամին մենք պտի զքու ծամ կտրինք։ Հ'ո՞րի օր մենք իդա հինգ վեց ճանկ օսկի քզի կիտանք, օր գու զէդ տղեն կորցուս։ Ու կիգա մեր աչքից առջևով կընցնի։

Պառավ կեսա.—Իդհաղ տղեն ք... իմ պապու բերան. ես պտի զտղեն էմալ ճամբցում օր չդառնա իգա։

Պառավ էլավ դեպի տղի տուն գնաց, ըսեց.—Ինկի Դուշի, զդուռ բաց։

Ինկի Դուշին էլավ, զդուռ բացեց, ըսեց.—Մարե՛, դու բարով էկար, ես քզի կարոտցեր ենք։

Պառավ ըսեց.—Բարով վայելեք զձեր Անմահութենի խնձոր,—ըսեց,—տեսա՞ր ինչ լավ, գեղեցիկ էլավ ու մեկ բանմ՝ ալ մացեր պակաս։ Պիտի ըդ քոշկին Դընյա Գուզալ օր իգա նստի մեշ, զդիրք դրի ուր չոքերուն ու կարդա, օր քու բեն բացվի,—ու պառավ էլավ գնաց։

Իրկուն օր էղավ, Սուրմա Սաչը էկավ, ըսեց.—Ինկի Դո՛ւշի, զդուռ բաց։

Ըսեց.—Ես դուռ չի՛մ բանա։

Ըսեց.—Հ'ո՞րին զդուռ չբանաս։

Ինկի Դուշին ըսեց.—Դու կէրթաս ճաղաց մինչև իրկուն դորճեսներու հետ կմժլիս, ապա ես մենակ մնամ դա տե՞ղ։ Իմ բեն չէլնի, գնա, Դընյա Գուզալ բի։ Օր իգա նստի, գիրք դրա ուր չոքերուն կարդա, օր իմ բեն բացվի։

Սուրմա Սաչ ըսեց.—Դուռ բաց, իգամ հաց ուտիմ, քիչ հանգըստիմ, աստված օղորմած ա։

Ինկի Դուշին զդուռ բացեց, տղեն էկավ ներս, հաց կերավ, քիչ հանգստավ, պառկավ, քնավ։

Լուսուն էլավ, զուր ձին քաշեց, հեծավ ու գնաց։ Շատ ու քիչ գնաց։ Գնաց յոթ ճամբու կցորդ, ուր հալվորուն ռաստ էկավ։ Բարև տվեց, բարև առավ։

Հալվորն ըսեց.—Ո՞ւր կէրթաս։

Ըսեց.—Կէրթամ Դընյա Գուզալ բերիմ։

Հալվոր ըսեց.—Իմա՞լ կրերիս։

Ըսեց.—Կէրթամ վերում, կիգամ։

Հալվոր ըսեց.—Յոթն օր կէրթաս, ծովիմ՝ ռաստ կիգաս, տեսնաս ծովու պռուկ սալմ՝ ա գրուկ ա, զէն սալ կշրջիս, գամ մը կա էն սալի տակ, կհանիս, հրեղեն ձի մը ծովուց կէլնի ու զէն ձին կգամիս ու կհեծնիս, Դընյա Գուզալ հանդ է։ Յոթ ծովու կցվան։ Հրեղեն ձին քշես մեշ ծովուն, ուր էրկու անկնջի մեշ կաչքիս, օր դու էրկու անկնջի մեշ չաչքիս, կընկնիս ծով, կխեղդիս. օր տվիր մեշ ծովուն ու գացիր, յոթ ծով վըր իրար կընցընաս, ծովուց օր էլար, գամ ձիու բերնեն կհանիս։ Հրեղեն ձին կէրթա մըջ ծովուն, դու զգամ կդնիս քարի տակ ու կէրթաս։ Շատ ու քիչ կէրթաս, քոշկիմ՝ ռաստ կիգաս։ Դընյա Գուզալ հանդ է նստուկ մեջ քոշկին, փանջարի առեշ, ղգիրք դրի վըր չոքերուն, կկարդա, դու կըսես. «Դընյա Գուզալ, դիդա աչքա»։ Դընյա Գուզալ կըսե. «Անի ո՞րն է հըրի ուր չոքեր՝ քար։ Հըրի քու չոքեր կէղնի քար»։ Ապա դու չվախենաս, հաղմ՝ լա կէսես. «Դընյա Գուզալ, էնի կեսա՝ անի ո՞րն, հըրի ուր մեջք՝ քար։ Էմլա դու չվախենաս, հաղմ՝ լէ կէսիս՝ Դընյա Գուզալ, քու անունն»։ Աստված օր կսիրիս դու զքու մեկ ճկունթ լա փանջարից հանիս դուս, ու Սըրմա Սաչ լա կանուկ փանջարի առաջ։ Ու Դընյա Գուզալ զուր ձեռ փանջարից կհանա դուրս։ Դու զքու ձեռ թալիս, զուր ձեռ բռնիս, անգախ Դընյա Գուզալ կասե. «Վոլա մարդ զիս չտարավ, ապա դու զիս տարարա»։ Դու կառնիս ու կիգաս։

Ու հալվոր զուր պատմութեն էնեց ու թըմմավ։

Սըրմա Սաչ հալվորից բարմնա էղավ ու գնաց։ Յոթն օր գնաց, ծովու մը ռաստ էկավ, աչքեց տեսավ ծովու կշտին սալ մը կար, էն սալի տակ գամ մը կար, զսալ օր շրջեց ու զգամ օր վերուց, հրեղեն ձի մը ծովուց էլավ ու զհրեղեն ձին հեծավ, քըշեց մեջ ծովուն, յոթ ծով վըր իրար՝ հ'ընցավ, յոթ ծովուց օր էլավ, զգամ ձիու բերնեն հանեց, զգամ դրեց քարի տակ, հրեղեն ձին լա գնաց մեջ ծովուն ու ինք ինկավ ճամբախ ու գնաց։

Շատ ու քիչ գնաց, քոշկի մը ռաստ էկավ։ Գնաց քոշկի առաջ

կանավ, տեսավ օր Դընյա Գուզալ փանջարի առաջ նստուկ էր։ Գիրք դրեր էր վըր չոքերուն, կկարդեր։

Ասեց.—Դընյա Գուզալ, դիդա աչքա։

Դընյա Գուզալ ըսեց.—Էնի ո՞րն ա, հըրի ուր չոքեր՝ քար։

Հըրի ուր չոքեր էղավ քար։

Սըրմա Սաչ ըսեց.—Դընյա՛ Գուզալ, դիդա աչքա։

Դընյա Գուզալ ըսեց.—Էնի ո՞րն ա, հըրի մեջքը՝ քար։

Հըրի ուր մեջք էղավ քար։

Սըրմա Սաչ ըսեց.—Դընյա՛ Գուզալ, քու անուն աստված օր կսիրիս դու քու զմեկ ճկունթ փանջարից հանիս դուս։

Օր զուր մեկ ճկունթ փանջարից հանից դուս, Սըրմա Սաչ զուր ձեռ խայիմ բռնեց։

Դընյա Գուզալ ըսեց.—Վոյա՛, մարդ զիս չտարավ, ապա դու զիս տարար։

Ան դախ Դընյա Գուզալի գիրք ուր չոքերուց պատավ, ուր սեր բըթլավ, Դընյա Գուզալ էլավ զուր փեշկիր տըղկից ու վըր Սըրմա Սաչին ցըիրցուց ու քար տարկավ, Սըրմա Սաչ մեջեն էլավ։ Սըրմա Սաչ առավ զԴընյա Գուզալ ու քելեց։

Դընյա Գուզալ Սըրմա Սաչին ըսեց.—Առ փարչ մը ձեթ, առ ջարծլի մը, առ փունջ մը ասեղ ու քելինք։ Հանդ է քար ու փետ կբոռա կեսա. «Հողեղեն տարավ զհրեղեն»։

Սըրմա Սաչ առավ փարչ մա, արծլի մա, փունջմ՝ ասեղ ու քելեցին։ Քար ու փետ բոռաց, ըսեց. «Հողեղեն տարավ զհրեղեն»։ Սար ու ձոր էղավ մարդ ու ինկան ուրանց էտև։

Դընյա Գուզալ ըսեց.—Սըրմա Սաչ, քու էտև աչքա, տեսնանք մարդ չէրևա։

Սըրմա Սաչ ուր էտև աչքից, տեսավ օր քընց էրկընքի աստղեր դհա մարդ ջատ կիգեր։

Դընյա Գուզալ ըսեց.—Փունջ ասեղ թալ էտևանց։

Փունջ ասեղ օր թալեց էտևանց, էղավ սուր ու սանդերք, կտրտեց զէդ մարգերու օտներ ու էդոք չկերցան հասան։ Հաղմ լա Սըրմա Սաչ աչքեց, տեսավ օր էկան։

Դընյա Գուզալ ըսեց.—Ջարծլին թա՛լ էտևանց։

Ջարծլին օր թալեց էտևանց, հ՚ըմեն էղավ դանակ ու ղուրանց օտներ կտրտեց ու չկրցան հասան։

Քիչմ՝ լա քելեցին, Սըրմա Սաչ էտևանց աչքեց, տեսավ օր էկան։

Դընյա Գուզալ ըսեց.—Ձեթի փարչ թալ էտևանց։

Ձեթի փարչ օր թալեց էտևանց, էղավ ահագին ծով մը ու ուրանք նոր նստան հանգստան։ Էն մարդիք օր ուրանց էտևեն կուգեն, ըսին՝ «Դուք ո՞ւրվի հ՚ընցաք»։

Ըսին.—Մեք զմեր գլուխ սկուցինք ինք, լող տվինք, հ՚ընցանք, —ու էդ մարդիկ էկան մեկ-մեկ խեղդան։

Սըրմա Սաչ առավ զԴընյա Գուզալ, էկավ ծովու պռուկ, զգամ քարի տակից հանեց, էրկու հատ հրեղեն ձի ծովուց էլան։ Դընյա Գուզալ ու Սըրմա Սաչ հեծան ու ինկան մեջ ծովուն։

Չյոթ ծով օր հ՚ընցան ու ծովուց էլան։

Հրեղեն ձիանք թողին, գացին մեջ ծովուն, զգամ լա դրին քարի տակ։ Սըրմա Սաչի ձին հոդ էր։ Բերեցին հեծան ու ինկան ճամբախ, գացին։ Շատ ու քիչ գացին, գացին յոթ ճամբու կցորդ, ուր հալվոր հոն էր։ Բարև տվեց, բարև առավ։

Հալվոր ըսեց.—Սուրմա Սա՛չ, Դընյա Գուզալ բերի՞ր։

Սուրմա Սաչ ըսեց.—Հա՛, բերի։

Հալվոր ըսեց.—Բարո՞վ վայելիս։

Սուրմա Սաչ առավ զԴընյա Գուզալ ու դեպի ուր տուն էկավ։ Ըսեց.—Ինկի Դուշի, զդուռ բաց։

Ինկի Դուշին ըսեց.—Օխե՞շ, դրախտի ձեն իմ անկանշ պատավ, իմ քա՛ղցր, անուշ, ախպե՛ռ։

Ինկի Դուշին զդուռ բացեց, գացին ներս, հաց կերան, քիչ հանգստան, պառկան, քնան։

Լուսուն Սըրմա Սաչ էլավ զուր ձին հեծավ, մորքրդոց դռնեբով հ՚ընցավ։ Մորքրդիք օր տեսան, պիտի քոռնեն։ Քըշեց գնաց դեպի թագավորի դուռ կանավ։

Թագավոր ըսեց.—Բարով խերով էկար, էս ի՞նչ խաղար զքգի կարոտցեր ինք։ Դու դո՞ր էր գացե։

Ըսեց.—Գացի զԴընյա Գուզալ բերի։

Թագավոր ըսեց.—Բարո՞վ վայելիս։

Սըրմա Սաչ հեծավ ու գնաց ուր տուն։ Զուր պատրաստութեն տեսավ, էկավ կանչեց թագավոր, էրկու հարիր մարդով ըսեց՝ «Հրամեցե՛ք, էրթանք իմ հարսնիս»։ Ու թագավոր առավ, գնաց ուր հարսնիք, էրկու հարիր մարդով, Դընյա Գուզալ պսակեց, յոթ ձեռք դհոլ ու զուռնա բերեց, տասնհինգ օր հարսնիք էնեց։

Դընյա Գուզալ էլավ զթագավոր ճակեց, զուր էրկու հարիր մարդով, բոլոր ճակեց ու դուրս հանեց։

Սըրմա Սաչի հարսնիք օր լըմընցավ, ուր մորքրդիք կանչեցին զպառավ, ասեցին.—Մե՛նք զքու շուխտ ծամ կտրինք։ Մեկ միլոն օսկի քըզի տվինք, քըզի ըսեցինք Սըրմա Սաչ կորցու ու Սըրմա Սաչ մեր աչից առշտով կընցնա ու դառնա ու զուրանց հարսնիք մեր աչից առաջ էնեց։

Պառավ ըսեց.—Թող իդհաղ անի ք... իմ պապու բերան, էյերքի զէնի ես սաղ թողնիմ։ Պտի զէնի իմալ ճամբախ լա ճամբցում՝ օր սաղ չիդա։

Ու լուսուն պառավ էլավ դեպի Սըրմա Սաչի տուն գնաց, ըսեց.—Ինկի Դուշի, զդուռ բաց։

Ինկի Դուշին էլավ զդուռ կբաներ ու Դընյա Գուզալ չթողեց։

Դընյա Գուզալ Ինկի Դուշին ըսեց.—Դու իմ ճոչն իս, ես քու պզտիկն իմ, դռան բանալ ինձի կպատկանի, դու խառըշ չըս էղնիր։

Դընյա Գուզալ էլավ զդուռ բացեց, պառավ օր հ՝ընցավ ներս, Դընյա Գուզալ աստծուց խնդրվավ, ըսեց. «Էդա պառավ դառնա սև անթրոց մը». ու պառավ դարձավ սև անթրոց մը։

Քսան տարի Սըրմա Սաչի մամ օր տարած են դրած են քեոլկի մեջ, շուկի գլուխ, մրոտ պղինձ մ՝ա ուր կշտին դրած են, օր հ՝ընցնող-դարձնող պտի զէդ որ էրես մըրեր ու օրական մեկ գարու հաց ա դրան կիտեն։ Մինչև Սըրմա Սաչ հասավ ու կարգվավ։ Քսան տարին լըմընցավ։ Սըրմա Սաչի կնիկ Դընյա Գուզալ էրկու վարդ տվեց Սըրմա Սաչին, ըսեց.—Տանիս թալիս վըր քու մայրին, օր քու մամ ըն տանշանքեն քիչ հանգստի։

Ու Սըրմա Սաչ էրկու վարդ բերեց ու թալեց վեր էդ կնկան։ Էդի քիչ հանգստավ ուր տանշանքեն։

Սըրմա Սաչ գնաց Դընյա Գուզալին ըսեց.—Ընի օտար կնիկ մա, ընի իմ մամ չէ ու իմ մամ մեռեր ա։

Դընյա Գուզալ ըսեց.—Աստված ընձի իմաստութեն տվեր ա, գոհ ու շնորհակալ իմ աստծուց,—ըսեց։ —Գնա՛, թագավորին կանչա, բի քու սենյակ, առանձին տեղմ ա, ու ես ներողութեն խընդրեմ ուրնե ու քու մորից, օր էդեր իս քու գլխու էլածներ քզի և ուրին պատմիմ։

Սըրմա Սաչ էլավ գնաց թագավորին կանչեց։ Թագավորից ներողութեն խնդրեց, ըսեց.—Էդա բան ամոթ է, բայց ես քզի կըսիմ, գու քու հարսին իգին իտաս ու ընի գա զիմ գլխու էլած, օր ես ի մորից ծնվեր իմ, քզի պատմա, ու ես լա հասկանամ, թե ի՞նչ ա։

Թագավոր իգին տվավ, Դընյա Գուզալ էլավ էկավ։

Դընյա Գուզալ ըսեց.—Թագավո՛ր, ապրած կէնաս։ Դու օր Հնկա կօլորտեր քզի ու աշխարհ ջուռ կիգեր ու գացիր քոշկի մը Հանդպար ու իրեք աղջիկ էնտեղ տեսար, իրեք լա քուր ին, ճոշ աղջիկ օր ըսեց քզի կառնիմ, օր դու օր ըսիր՝ արհեստ դինա՞ս, օր ինք ըսեց՝ օրեն խալի մա կէրնամ գործիմ ու դու զէնի բերիր ու ղուր էսած չկէրցավ էնեց, դու թալիր ծրտոտ քոխ։ Օր դու գացիր միշնեկ քըրոջ, օր դու ասիր՝ զիս չը՞ս առնի, անի ըսեց՝ կառնիմ, օր դու ըսիր՝ արհեստ դինա՞ս, անի ըսեց՝ ընպես մեկ ճաշ կսուքիմ օր քու ասկար ասկարով ուտա, չթըմմի, օր դու զէն լէ բերիր, ընդրա ասածներ լա սուտ էլավ։ Դու զէն լէ թալիր ծրտոտ քոխ։ Դու գացիր պզտիկ քըրոջ. պզտիկ քըրոջ ըսիր՝ դու զիս կառնի՞ս։ Ըսեց՝ հա։ Ըսիր՝ արեստ դինա՞ս։ Ըսեց՝ «Չէ՛, չեմ կէրնա սուտ էնի, զիս օր տարար, ինն ամիս օր լմնցավ, կբերիմ տղա ու աղջիկմ՝ լա քզի, տղի ծամեր սըրմա էղնի ու աղջկա ակռեք՝ սադաֆ։ Ու դու բերեցիր, ուր ինն ամիս օր լմնցավ, բերեց տղա ու աղջիկմ՝ լա ու իմալ օր ըսեր էր, էնպես էր. տղի ծամեր՝ օսկի էր, աղջկա ակռեք՝ սադաֆ։ Ու ըն էրկու ջոջ քուր օր դու առաջ բերեր էր, ուրանց ասածներ սուտ է էլե, օր դու թալեր էր ծրտոտ քոխ, զտատմեր սովրցած ին, ըսած ին՝ «Դու զէն տղեն ու աղջիկ կորցուս, էրկու ճանկ օսկի կիտանք քզի»։ Պառավ էլեր էր, զտղա ու աղջիկ դրեր էր սանդուխ, զսանդուխի դուռ փակեր էր ու ծով թալեր էր։ Էրկու հատ շան լակոտ բերեր էր, կնկա կշտին դրեր էր, դու օր տատմորից հարցցեր էր, ըսեր էր՝ «Մարե, քու աղջիկ ի՞նչ ա բերե»։ Տատմեր ըսեր էր՝ «Օտնակոտոր ըլներ հըմալ աղջիկ, ջուխտմ՝ լա շան լակոտ ա բերեր է». ու դու պառվու խոսքին համոզվեր էր ու տան տակ քոլիկ մա սուքեր էր, զըդ կնիկ լա տարեր մեջ դրեր էր, հ՚ընցնող-դարձնող զուր էրես կմրեր. էդա քսան տարի ըդ անմեղ կնիկ մըջ էդ տանջանքին ա, ինչ օր ըսեր իմ ու քզի պատմեր իմ, հեչ խոսքմ ա սխալվե՞ր իմ, անպե՞ս է, թե՞՝ չէ։

Թագավոր կըսե Դընյա Գուզալին.—Օրնիալ էղնի քու հեր ու մեր։ Ինչպես օր ըսիր ու ընպես էր, գու հեչ խոսքմ՝ լա չսխալվար։

Դընյա Գուզալ ըսեց Թագավորին.—Սանդուխ ջուր տարավ ու ջաղջի վաքին ասըռցուց՝ ու ջաղջպան վերուց զէդ սանդուխ տարավ, զէդ սանդուխ բացեց, տեսավ օր տղա ու աղջիկմ՝ էր ինք։ Տղի ծամեր օսկի էր, աղջկա ակռեք սադաֆ էր։ Ջաղջպան լա ուր ծերության ժամանակն էր, հեչ զավակ չուներ, զէդ էրկու էրեխեն ուր կնկան հանձնեց սիրով մը տիրեցին։ Շատ տարիներ անցավ,

ըդ էրկու էրեխեն շոշցան ու չափահաս էղան, ջաղջպնի օր ուր կնկան լմնցեր էր, ուրանց ժամանակ լմնցավ ու մեռան։ Տղի անուն Սըրմա Սաչ էր ու աղջկա անուն՝ Ինկի Դուշի։ Ու ըդ տղեն էլավ ուրեն քոշկ ու սարեմ՝ ա սուքեց, ուրին Հազարենց բլբուլը բերեց, անմահութենի խնձորը բերեց, ուրին դաղդա սարքեց. թե չըս ավ-տընա՝ իդա Սըրմա Սաչ էն տղեն ա, իդա աղջիկ լա՝ էն աղջիկն ա ու ես ալ իրան կնիկն իմ։

Թագավոր էլավ, բռնեց Դընյա Գուղալի էրես պաղեց, ըսեց.— Իմ սիրելի զավակ դու իս,—ու էկան մեկնան։

Ու բերեց Սըրմա Սաչի մամ էն քոլկի մըշեն համամլամիշ ընեց, սերսուրմ՝ լա հագուց ու էն գերութենեն աղատեց։ Բերեց մեկէլ էրկու քուր կապեց ձիաներու պոչ, ըսեց ձիաններուն.

«Տարե՛ք, քարեր զարկիք, սարեր զարկիք, իրկուն իգաք ձեր պոչ մըշ ծովուն ըզոդիք, իգաք դուռ կանիք»։

Իրեք խնձոր իշավ էրկնուց. մեկը՝ ըսողին, մեկը՝ լսողին, մեկ լա՝ զահմաթ քաշողին։

Ըդոնք հասան ուրանց մուրազին, դու լէ հասնիս քու մուրա-զին։